

Ամալյա ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
Երևանի պետական համալսարան

ԳՈՒՆԸՆԿԱԼՍԱՆ ԵՎ ԳՈՒՆԱՆՎԱՆՍԱՆ
ՓՈԽՀԱՐԱԲԵՐՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐԸ ԼԵԶՎԱԲԱՆԱԿԱՆ
ՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

Սույն հոդվածում անդրադարձ է կատարվում լեզվաբանական և հոգեբանական մի այնպիսի երևույթի, որպիսին գունանվանման և գունընկալման փոխհարաբերության խնդիրն է: Հենվելով լեզվաբանական և լեզվահոգեբանության տեսությունների վրա՝ քննության է առնվում տարբեր հանրություններում գունանունների կենսաբանական ընկալումների ընդհանրության և դրանց քանակական տարբերությունների լեզվահոգեբանական մեխանիզմը: Սասնավորապես քննությունը տարվում է լեզվական հարաբերականության և լեզվական համընդհանրության տեսությունների շրջանակներում: Նշյալ տեսությունների համատեքստում հաշվի են առնվում նաև հայերենի առանձնահատկությունները:

Բանալի քառեր. լեզվական հարաբերականություն, լեզվական մեխանիզմ, պատճառաբանվածություն, լեզվական կարգ, հանրույթ, լեզվական համընդհանրություն, գունային գեղագիտություն, քառաբաղադրիչ համակարգ, գունաբառապաշար, լեզվամշակույթ, կարգայնացում

Ժամանակակից գիտության տվյալներով հաստատված է, որ մարդու զգայական օրգանները /այդ թվում նաև տեսողական/ անկախ էթնիկական պատկանելությունից, ունեն նույն կենսաբանական կառուցվածքը: Այստեղից հետևում է, որ աշխարհի իրերն ու երևույթները /այդ թվում նաև գույները/ նույն կերպ են արտապատկերվում մարդու գիտակցության մեջ, սակայն տարբեր լեզուներով խոսող մարդիկ տարբեր կերպ են հատվածավորում և անվանում արտալեզվական աշխարհը: Տարբեր են նաև իրերի և երևույթների մեկնաբանման հոգեբանական և լեզվական մեխանիզմները այս կամ այն հանրությունում: Նշյալ իրողությունների փոխհարաբերություններին են առնչվում լեզվաբանական բնույթի բազում հարցադրումներ, որոնցում առանցքային նշանակություն է ձեռք բերում լեզուներում համընդհանուր օրենքների գոյության/չգոյության խնդիրը, որի քննության շրջանակներում էլ գույն-գունընկալում-գունանվանում-գունիմաստ քառանդամը դարձել է լեզվաբանների գիտական հետաքրքրությունների կենտրոնական առարկաներից մեկը: Այս համատեքստում ձևավորվել են երկու իրարամերժ տեսություններ՝ լեզվական հարաբերականության և լեզվական համընդհանրության:

Համաձայն Սեպիր-Ուորֆի հարաբերականության տեսության՝ մտածողությունը և աշխարհաճանաչումը էապես պայմանավորված են լեզվական համակարգով: Նման վարկածի համար հիմք է ծառայել այն փաստը, որ տարբեր լեզուներում առկա են *գույն* արտահայտող տարբեր քանակի բառամիավորներ /պարզ և բարդ/, որոնք մատնանշում են գունային սպեկտրի հատվածները: Այստեղից էլ արվում է այն հետևությունը, թե մարդն աշխարհը ճանաչում է այն

չափով, որ չափով տվյալ լեզվում առկա են /կամ առկա չեն/ համապատասխան լեզվական կարգերը: Ահա, թե ինչ է գրում այս մասին Ուորֆը. «Մենք հատվածավորում ենք աշխարհն այնպես, ինչպես մեզ հուշում է մեր մայրենի լեզուն»: Երևույթների շարքում մենք առանձնացնում ենք այս կամ այն կարգը, տիպը ոչ թե այն պատճառով, որ նրանց գոյությունն ինքնին ակնհայտ է, այլ այն, որ դրանք մեզ ներկայանում են որպես գեղագիտական տպավորությունների հոսք, որը պետք է կարգավորվի /կազմակերպվի/ մեր գիտակցության մեջ՝ այսինքն լեզվական համակարգի կողմից /Sapir, Whorf, 1999/:

Եթե ասվածը վերագրենք աշխարհի գունային լեզվական պատկերի ստեղծմանը, ապա պետք է արձանագրենք, որ մարդն ընկալում է միայն այն գույները, որոնց անվանումները առկա են իր մայրենի լեզվում: Այս վարկածի քննադատները գտնում են, որ նման եզրակացությունը չափազանցված է և արդյունք է հետազոտական լեզվական նյութի ոչ մեծ ծավալի: Գի Դոյչերի կարծիքով, եթե լեզվում բացակայում է որևէ հասկացություն, ապա դա ամենևին չի նշանակում, որ տվյալ հասկացությունը գոյություն չունի մտածողության տիրույթում: Հակառակ դեպքում ստացվում է, որ *ազատություն* բառի բացակայության պարագայում ստրուկները կարող են հրաժարվել ապստամբությունից: Գերմաներենի *schadenfreude /չարախնդրություն/* բառի բացակայությունը ֆրանսերենում ամենևին չի նշանակում, որ ֆրանսիացիներին հատուկ չէ *se réjouir des malheurs d'autrui* հոգեվիճակը /Deutscher, 2010/:

Լեզվական համընդհանրության տեսության ներկայացուցիչներ Բ. Բերլինը և Պ. Կեյը հեղինակել են մի ստվար աշխատություն՝ նվիրված գունանվանումների խնդրին, աշխարհի մի քանի տասնյակ լեզուներում: Փորձարարական ճանապարհով, քննության ենթարկելով այս կամ այն տարբեր լեզվաընտանիքին պատկանող շուրջ ութսուն լեզուների տվյալներ, հեղինակները գալիս են հետևյալ եզրակացության. աշխարհի լեզուներում գունանունների զարգացումը ենթարկվել է որոշակի համընդհանուր օրինաչափությունների և ընթացել հետևյալ փուլերով.

- *առաջին* փուլում գործածության մեջ են դրվում նախ *սև* ու *սպիտակ* կամ *բաց* և *մուգ* գունանունները,

- *երկրորդում* ի հայտ են գալիս *կարմիրը, կանաչը, դեղինը, կապույտը, գորշը,*

- *երրորդում* տարբեր հաջորդականությամբ՝ *վարդագույնը, նարնջագույնը, մոխրագույնը,* որոնք կազմում են տասնմեկ հիմնական գույների համակարգը:

Գիտնականների համոզմամբ՝ գունանունների քանակը տվյալ ժամանակահատվածում կախված է լեզվի պատմական զարգացման մակարդակից: Այլ կերպ ասած՝ քաղաքակրթության զարգացմանը զուգընթաց մեծանում է գունանունների քանակը /Berlin, Kay, 1969/: Գունանունների փուլային զարգացմանը անդրադարձել են նաև այլ հետազոտողներ՝ նկատելով դրանց ձևավորման այլ հերթականություն: Այսպես, Է. Օնոլը գունընկալման և գունանվանման պատմությունը բաժանում է երեք փուլի: Առաջինում, ըստ նրա,

տարբերակվել են միայն սևն ու սպիտակը /նկատենք, որ այս կարծիքը համընկնում է Բերլինի և Կեյի տեսակետին/, երկրորդում՝ կարմիրն ու դեղինը, երրորդում՝ ի հայտ են գալիս այսպես կոչված *սառը* գույները /կանաչը, կապույտը և այլն/ և դրանց երանգները /Онол, 2005/:

Հարկ է նշել, որ գունանունների պատմական զարգացման օրինաչափությունների ուսումնասիրության համար որպես հարուստ նյութ են ծառայել գրական ստեղծագործությունները, սակայն միևնույն փաստի հիման վրա արվել են տարբեր, երբեմն էլ իրարամերժ եզրահանգումներ, մասնավորապես գունընկալման և գունանվանման փոխհարաբերության հարցում: Որպես ասվածի վառ ասպացույց բավական է միայն մեջբերել արդեն դասական դարձած, այսպես կոչված *Հոմերոսի* օրինակը: Նշյալ տեսությունների կողմնակիցներից ոմանք Հոմերոսի ստեղծագործությունը վերագրում են գունանունների զարգացման երկրորդ փուլին: Այս վարկածի հեղինակ Գլադստոնին մման եզրահանգման է մղել այն փաստը, որ Հոմերոսը շատ տարօրինակ կերպով է նկարագրել որոշ առարկաների գույները: Ասենք ծովը՝ գինու գույն, երկինքը՝ մուգ մանուշակագույն և այլն: Այլ կերպ ասած՝ գունանվանումները չեն համապատասխանել առարկաների իրական գույներին: Այստեղից էլ եզրահանգել է, որ տվյալ ժամանակաշրջանում հույները պարզապես անտարբեր են եղել որոշ գույների նկատմամբ /տվյալ դեպքում կապույտի և կանաչի/ և լեզվում չեն ունեցել համապատասխան գունանուններ /Gladstone, 1858/: Գլադստոնի այս վարկածը լայն ընդունելության արժանացավ հատկապես այն տեսաբանների կողմից, որոնք ազգերի բազմազանությունը բացատրում են ոչ այնքան մշակութային, որքան կենսաբանական գործոններով /Deutscher, 2010/: Այս հարցի նկատմամբ գիտնականների հետաքրքրությունը չի մարել մաս մեր օրերում, և գտնվում են ինչպես կողմ, այնպես էլ դեմ արտահայտվողներ: Այսպես, Կլոդ Ռոմանոյի կարծիքով, քանի որ Հոմերոսը կույր էր, նրա գունային ընկալումները չի կարելի նույնացնել հունական լեզվահանրույթի սովորական ներկայացուցչի գունընկալումների հետ: Հաջորդ հակափաստարկն էլ այն էր, որ Հոմերոսը պոետ էր, իսկ պոետներին միշտ էլ հատուկ է իրերն ու երևույթները այլակերպ, գեղարվեստորեն նկարագրելը /Romano, 2010/:

Հոմերոսը չէր կարող կույր լինել, հավաստիացնում է Գի Դոյչերը, այն պարզ պատճառով, որ ստեղծագործության մեջ բոլոր նկարագրությունները շատ կենդանի և իրատեսական են, տարօրինակ են միայն գունանվանումների ձևակերպումները: Դոյչերի կարծիքով Գլադստոնը պարզապես շփոթել է պատճառն ու հետևանքը: Այսինքն՝ հին հույները ոչ թե գուրկ էին որոշակի գույներ ընկալելու կենսաբանական հնարավորությունից, այլ դեռ չունեին տվյալ գույներին համարժեք անվանումներ /Deutscher, 2010/:

Նման դիտարկումներ են կատարվել նաև հին սլավոնական լեզուների նյութի հիման վրա: Հետազոտողները հանգել են այն եզրակացության, որ միջնադարյան գրական ստեղծագործություններում շատ պարզունակ է ներկայացվել գունային ներկայանակը, որում տեղ չեն գտել դեղին, կապույտ, գորշ գույները: Սակայն այս դեպքում մեկնաբանությունները չեն հասնում գուն-

ընկալումների խնդրին, այլ սահմանափակվում են միջնադարյան պոեզիայի առանձնահատկությունների մատնանշմամբ՝ այն է. «Միջնադարյան պոեզիային հատուկ չէր գունային գեղագիտությունը, և գույնը մնացել է գեղարվեստական տեքստից դուրս», սակայն XVI դարից սկսած, ինչպես նշում են շատ գիտնականներ, նկատվում է հակառակ միտումը: Գեղարվեստական գրականության, հատկապես պոեզիայի մեջ. «զանազան գեղարվեստական պատկերների ստեղծման համար անհրաժեշտություն է զգացվում նորանոր գունային անվանումների», որոնք հարստացնում և ընդլայնում են գունանվանումների ցանկը /Бородина, Гак, 1979/:

Գունանվանումների ծագման փուլային տեսությունները քննադատության ենթարկվեցին նախ և առաջ փորձարարական և հետազոտական մեթոդների ոչ կատարյալ լինելու պատճառաբանությամբ /Вежбицкая, 1996/: Բերվեցին նաև այլ հակափաստարկներ, որոնք առավել ամփոփ ձևով շարադրված են Մաք-Նեյլի աշխատություններում: Փորձենք հակիրճ ներկայացնել նաև նրա տեսակետը:

Գունանունների առաջացման համընդհանուր հերթականություն տարբեր լեզուներում գոյություն ունենալ չի կարող, քանի որ դրանց ծագումը նախ և առաջ պայմանավորված է տվյալ լեզվամշակույթում գույների կիրառական գործառնությունների կարևորությամբ, համապատասխան գունակիր առարկաների օգտագործման անհրաժեշտությամբ և հաճախականությամբ: Չէ՞ որ ի սկզբանե գունանունները եղել են առարկաների անվանումներ, իսկ հետագայում աստիճանաբար վերացարկվել են: Այդ իսկ պատճառով ամեն մի լեզվամշակույթ ունի գունանունների ծագման և զարգացման սեփական պատմությունը: Գունանվան ծագումը սերտորեն կապված է նաև տվյալ հանրույթի անհատի ընկալման հոգեբանական առանձնահատկությունների հետ: Որոշ հոգեբանների կարծիքով, կարմիր-կանաչ, երկնագույն-դեղին գունագույգերը անբաժանելի միասնություն են կազմում որոշ մշակույթների պատկանող մարդկանց ընկալման հոգեբանական տիրույթում: Այն իր արտահայտությունն է գտել չինարենի և ճապոներենի հիմնական գունանվանումների քառաբաղադրիչ համակարգում՝ սև, սպիտակ, կանաչակարմիր, դեղնաերկնագույն /McNeil, 1996/:

Ընդունելով, որ լեզուներում գույների համընդհանուր իմաստների գոյությունը արդյունք է պատճառահետևանքային գործընթացի, որոշ հետազոտողներ այդ երևույթի հիմքում տեսնում են կենսաբանական պատճառաբանվածություն /Berlin, Kay, 1969/, ոմանք էլ այլ բնույթի մեկնաբանություններ են հնչեցնում: Մասնավորապես Ա. Վեժբիցկայան *Գույների անվանումները և տեսողական ընկալման համընդհանուր կադասպարը* աշխատության մեջ նշում է, որ գունանվանումները համընդհանուր հասկացություններ չեն, մինչդեռ տեսողությունը իրապես համընդհանուր մարդկային իրողություն է: Նրա կարծիքով անհնարին է գունային տպավորությունները բառերով արտահայտել, հնարավոր է միայն մեր տեսողական կարգերը հարաբերել ընդհանրորեն ընկալվող որոշ կադասպարների: Նա այդ կադասպարների թվին է դասում կրակը, արևը, երկինքը և բուսականությունը: Վեժբիցկայան հայտնում է նաև

այսօր մեծ տարածում գտած այն միտքը, թե գունանունների ստեղծման փուլը բնութագրվում է նույն առանձնահատկություններով՝ բոլոր լեզուների համար: Այն է՝ գունանունների համար հիմք են ծառայում օբյեկտների անունները: Վեժբիցկայայի կարծիքով աշխարհի լեզուների համընդհանուր առանձնահատկություններից մեկն այն է, որ գունանվան նկարագրության համար հիմք են հանդիսացել մարդու բնակության վայրի համար որոշակի կարևորություն ներկայացնող առարկաներ, հանքանյութեր, կենդանիներ, բույսեր և այլն /Вежбицкая, 1996/: Այս տեսակետը կիսում են նաև Գ. Միլը, Գ. Սպենսերը /Милль, Спенсер, 1870/: Որոշ հետազոտողներ էլ գտնում են, որ գունանունների բազմազանությունը ձևավորվում է այսպես կոչված առաջնային գույների /կարմիր, կանաչ, կապույտ, դեղին/ անվանումներից /Геринг, 1870/:

Այս երկու իրարամերժ տեսություններում առաջ քաշված դրույթները քննարկման առարկա են դառնում նաև ժամանակակից հոգեբանության և ճանաչողական /կոգնիտիվ/ լեզվաբանության լույսի ներքո: Է. Ռոշն իր հոդվածներից մեկում նշում է այն միտքը, որ մասնավորապես 90-ական թվականներից սկսած ուրվագծվում է մի հետաքրքիր երևույթ: Ուորֆի լեզվական հարաբերականության վարկածը կարծես թե վեր է հառնում մոխիրներից, փորձ է արվում վերաարժեքավորել այդ դրույթները ժամանակակից լեզվաբանության նոր հայեցակարգային իրողություններին համապատասխան, օրինակ՝ Ռ. Լանգաքերի ճանաչողական քերականությունը, Գ. Պալմերի մշակութային լեզվաբանությունը և այլն /Langacker, 1987, Palmer, 1996/:

Նույն աշխատության մեջ Ռոշը գրում է, որ ամենացավալին այս ամենում այն է, որ Ուորֆի վարկածի քննադատությունը մինչ այսօր գռեհիկ պարզունակեցման փորձ է: Ինչ վերաբերում է Բերլինի և Քեյի տեսությանը, ապա այն քննության ենթարկվեց հոգեբանության տեսանկյունից /Spencer, Rosch, 1978/:

Գիտական մեծ հետաքրքրություն է ներկայացնում գույների խորհրդանշանային իմաստների ուսումնասիրությունը լեզվամշակութային համատեքստում ինչպես տարածամանակյա, այնպես էլ համաժամանակյա կտրվածքով: Խորհրդանշանի մասին ամենատարածված պատկերացումը, գրում է Լուրմանը, կապված է որոշակի բովանդակությամբ որևէ գաղափարի հետ, ինչն էլ իր հերթին ծառայում է որպես արտահայտության պլան՝ մեկ այլ՝ մշակութային առավել արժեքավոր բովանդակության համար /Lührmann, 1999/: Յուրաքանչյուր խորհրդանշան, նշում է Արուտյունովան, պատկեր լինելով հանդերձ, ունի ավելի բարձր նշանային կարգավիճակ, ինչով էլ պայմանավորված է այն հանգամանքը, որ այն շատ հաճախ մեկնաբանվում է մշակույթի համատեքստում /Арутюнова, 1999/:

Այս առումով ուշագրավ են անգլիացի ազգագրագետ Վ. Թերների աշխատությունները, որոնցում փաստացի մեծածավալ լեզվական նյութի հիման վրա վերլուծության են ենթարկվել աֆրիկյան մի շարք ցեղերի կյանքում գույների խորհրդանշանային իմաստները: Այսպես, աֆրիկյան *Նդենբու* ցեղի պատկերացման մեջ Աստված գոյություն ունի երեք էություններում, որոնցից յուրաքանչյուրը ներկայացվում է իրեն հատուկ գույնով՝ սպի-

տակ, սև, կարմիր: Թերների կարծիքով, հիմնական գույների խորհրդանշանային իմաստների ակունքները պետք է փնտրել մարդու կենսահոգեբանական փորձի մեջ: Նա գտնում է, որ անժխտելի է սպիտակ գույնի կապը մարդու օրգանիզմի երկու կարևորագույն հեղուկների հետ՝ սերմնային և կաթնային: Այստեղից էլ գալիս է սպիտակ գույնի ընկալումը որպես կեցության, կյանքի, ուժի, առողջության, մաքրության խորհրդանիշ: Բացի այդ, նրա կարծիքով, ակնառու է նաև կապը սպիտակ գույնի և լույսի միջև: Ի տարբերություն գիշերվա /մթի, սևի/, օրվա /սպիտակի, լույսի/ ընթացքում մարդն առավել ակտիվ է, գործունյա, հստակորեն ընկալում է շրջակա միջավայրը, այդ իսկ պատճառով էլ սպիտակը հանդես է գալիս նաև որպես մտքերի և գործողությունների, արարքների մաքրության խորհրդանիշ, մտորում է գիտնականը: Թերներն անդրադարձել է նաև գույների խորհրդանշանային իմաստներին քրիստոնեության մեջ: Վերը նշված խորհրդածություններով է նա բացատրում այն, որ քրիստոնեության մեջ սպիտակը՝ սրբության, անաղարտության և հեզության խորհրդանիշ է, իսկ սևը՝ չարիքի, մեղքի, կարմիրը՝ Քրիստոսի արյան, որ թափվել է մարդկության փրկության համար: Սևը խորհրդանշում է նաև մահը՝ որպես հավիտենական խաղաղություն և դառնում է վանականների հագուստի հիմնական գույնը /Тернер, 1983/:

Հետազոտությունների արդյունքները վկայում են այն մասին, որ գույների խորհրդանշանային իմաստները ենթարկվում են որոշակի փոփոխությունների դարերի հոլովությամբ՝ պայմանավորված սոցիալ-քաղաքական և պատմամշակութային գործոններով: Այս առումով հատկանշական է Բ.Ա. Բազիմբայի *Գույնը և հոգեկան կառուցվածքը* մենագրությունը, որում հեղինակը գույների խորհրդանշանային իմաստների զարգացումը բաժանում է երեք փուլի:

1. *Տիեզերական* - գույները որպես աշխարհի ստեղծման գլխավոր ուժերի ու ակունքների խորհրդանիշ /Արիստոտելի տեսություն/:

2. *Աստվածաբանական կամ կրոնական* - գույները որպես վերին ուժերի, տարերքների առանձին հատկանիշների խորհրդանիշ:

3. *Հասարակական - հոգեբանական* - այս փուլում գույները դառնում են հասարակական-քաղաքական կառուցվածքների և մարդկային հատկանիշների խորհրդանիշ: Ընդլայնվում է գունաբառապաշարը /Базымба, 2001: 43/:

Հարկ է նշել, որ գույների խորհրդանշանային իմաստները տեղ են գտել լեզվական արտահայտություններում՝ ձեռք բերելով լեզվամշակութային արժեք /Верещагин, Костомаров, 1980; Шемякин, 1992; Василевич, 1987/:

Բերենք մի քանի օրինակ տարբեր լեզվամշակույթներից: Լիտվերենում *սպիտակ մարդիկ* արտահայտությամբ բնորոշում են ազնիվ մարդկանց, հունգարերենում թույլ սեռի ներկայացուցիչներին անվանում են *սպիտակ ժողովուրդ*: Լեհերենում *սպիտակի հետ ամուսնանալ* նշանակում է մահանալ, ռուսերենում չափից ավելի ակոհող օգտագործած մարդկանց վիճակը *սպիտակ տենդ* են անվանում: Չինարենում *կարմիր սիրտ* բառակապակցությունը նշանակում է ազնիվ, անմիջական մարդ, ֆրանսերենում *կապույտ վախ* արտահայտությունը հոմանիշ է *մեծ վախ* արտահայ-

տությանը, հայերենում *կանաչ կարմիր կապել* նշանակում է ամուսնանալ և այլն: Տեղին է այստեղ հիշատակել Սրեզնևսկու դիպուկ արտահայտությունը ազգ – լեզու փոխհարաբերության մասին. «Յուրաքանչյուր ազգ իր ամենասպառիչ և ամենաճշգրիտ ինքնաարտահայտությունն է գտնում լեզվի մեջ» /Срезневский, 1958/:

Այսպիսով, կարող ենք եզրակացնել, որ գույները գրեթե չունեն համընդհանուր նշանակություններ, վերջիններս փոփոխվում են ժամանակի և տարածության մեջ՝ վերաիմաստավորվելով տվյալ մշակույթի առանձնահատկություններին համապատասխան: Ակնհայտ է, որ մենք նկատի ունենք ոչ թե գույների վերաբերական /որոնք թերևս նույնպես կարող են հարաբերականորեն ընկալվել կապված շրջակա միջավայրի գուներանգների հետ/ այլ՝ խորհրդանշանային և հարանշանային իմաստները:

Լեզու և մշակույթ փոխհարաբերության ուսումնասիրման համատեքստում մեծ արժեք է ներկայացնում Պաստուրյի՝ գույների խորհրդանշանային իմաստների էվոլյուցիոն զարգացումը փուլերի բաժանելու փորձը արևմտյան քաղաքակրթության կառուցվածքում:

Այսպես, անտիկ աշխարհից մինչև 12-րդ դարը գունային համակարգը հիմնականում եղել է եռանդամ՝ սպիտակ, սև, կարմիր, որոնցից յուրաքանչյուրին տրվել է հասարակական-քաղաքական բնույթի որոշակի խորհրդանշանային իմաստ: Հին Հռոմում այս գույները խորհրդանշել են եռաստիճան դասակարգային շերտավորումը: Կապույտ գույնը չի ներառվել այս արժեքային համակարգի մեջ այն պատճառով, որ այն գուգորդվել է կելտական և գերմանական բարբարոս ցեղերի հետ: Սակայն XI դարից սկսած կապույտ գույնը սկսում է փոխել իր կարգավիճակը: Այն լայն կիրառություն է ստանում սրբապատկերագրության մեջ՝ որպես Սուրբ Մարիամի գլխաշորի գույն, դառնում է գոթական տաճարների լուսամուտների ապակիների գերիշխող գունեանգ, այնուհետև *մուտք է գործում* քաղաքակրթություն՝ *հայտնվելով* թագավորական դինաստիաների զինանշաններում: 15-16-րդ դարերում *սև* և *սպիտակ* գույները աստիճանաբար դուրս են մղվում արժեքային համակարգից, իսկ *կապույտը* սկսում է էլ ավելի ընդլայնել իր *բարոյական բովանդակության* տիրույթները՝ վերածվելով ազնվության, վեհության խորհրդանշի: Եվ վերջապես 18-20-րդ դարերում հաստատվում է կարմիր-կապույտ-դեղին եռանդամ գունային արժեհամակարգը: Հետաքրքրական է, որ Պաստուրոն իր աշխատության վերջում *կապույտ* բառին վերագրում է ուրույն խորհրդանշանային իմաստ: Նա գրում է. «...ծովը դարձել է կապույտ, իսկ կապույտն էլ՝ սառը, ինչպես այսօրվա արևմտյան քաղաքակրթությունները» /Pastoureaux, 2002/: Աշխատության այս վերջին տողերը վկայությունն են այն բանի, որ գույներն իրենց մեջ ներառում են հոգեբանական ներազդման մեծ ներուժ, ինչն էլ իր հերթին անսպառ *աղբյուր է* գունանուն պարունակող բազում նորանոր լեզվական արտահայտությունների առաջացման, լեզվում աշխարհի գունային պատկերի բազմազանության, տարբեր լեզուներում գունանունների քանակի փոփոխության համար:

Շատ լեզվաբանների հայեցակարգերում *լեզվական պատկեր* հասկացությունը հիմնված է լեզվի ներքին ձևի մասին Հումբոլտի կողմից առաջ քաշված գաղափարների վրա: Աշխարհի լեզվական պատկերը՝ մեզ շրջապատող աշխարհի մասին պատկերացումների ամբողջությունն է, արժեքների և նորմերի մի համակարգ, որ հատուկ է տվյալ լեզվամշակույթին: Ամեն մի բնական լեզու արտացոլում է տվյալ հանրության կողմից աշխարհի ընկալման և կարգայնացման յուրակերպությունը: Լեզվում արձանագրված իմաստները կազմում են աշխարհաքաղաքական մի միասնական համակարգ, հանրային մի փիլիսոփայություն՝ պարտադրված տվյալ հանրույթի բոլոր անդամներին /Вездицкая, 1996/: Աշխարհի լեզվական պատկերը արդյունք է մարդու՝ աշխարհի իմաստավորմանն ու ճանաչմանը ուղղված մտային գործունեության, որում լեզուն հանդես է գալիս որպես միջոց: «Երբ ասում են, գրում է Կոլշանսկին, որ ամեն մի լեզու, ինչ-որ ձևով, բայց ամեն դեպքում յուրակերպ, ներկայացնում է աշխարհն իր միավորների իմաստներում /բառապաշար/, պատկերավոր կաղապարներում /դարձվածքներ/, կարգերի ուրույն կառույցներում /քերականություն/, ապա, որպես կանոն, այս պնդումը բացատրվում է նրանով, որ առանձին լեզվական ձևերի նշանակությունները զգալիորեն տարբերվում են լեզվից լեզու, ինչն էլ իր հերթին հիմք է տալիս խոսելու աշխարհի տարբեր կարգայնացումների, այլ կերպ ասած, տարբեր լեզուների կողմից տարբեր լեզվապատկերների ստեղծման մասին» /Колшанский, 2005/: Վայսբերգերն այս մասին գրում է, որ լեզվի բառապաշարը լեզվական նշանների հետ մեկտեղ, ներառում է նաև որոշակի մտային միջոցների ամբողջություն, որով և պայմանավորված է այն իրողությունը, որ մայրենի լեզվում ուրվագծվում է որոշակի լեզվական պատկեր՝ ընդհանուր տվյալ լեզվական համայնքի բոլոր անդամների համար /Baйцбергер, 2009/:

Դժվար չէ նկատել, որ Վայսբերգերը *լեզվական պատկեր* հասկացության մեջ շեշտադրում է էթնո-աշխարհագրական և ազգամշակութային տարրը, ավելի ճիշտ բնույթը: Նրա կարծիքով աշխարհի գիտական պատկերը լեզվական պատկերից տարբերվում է նրանով, որ գիտությունը ձգտում է իրականությունը պատկերել օբյեկտիվ, համընդհանուր տրամաբանական կարգերի միջոցով, իսկ լեզուն սահմանափակվում է էթնոմտածողության կարգերով, որոնք մարմնավորվում են լեզվական ձևերում:

Գունային պատկերը աշխարհի լեզվական պատկերի մի մասն է միայն և այն ձևավորվում է, ինչպես արդեն նշել ենք, տվյալ ժողովրդի պատմական զարգացման ընթացքում: Այս առումով հետաքրքրական է հիշատակել, որ աֆրիկյան ցեղերից մեկի լեզվում գոյություն ունի ընդամենը երկու բառ՝ գունային պատկերի ողջ բազմազանության անվանման համար: Բոլոր, այսպես կոչված *տաք* /կարմիր, դեղին, նարնջագույն/ և *սառը* /կապույտ, կանաչ, մանուշակագույն/ գույները ունեն համապատասխանաբար մեկական անվանումներ /Панов, 2004/:

Առավել յուրահատուկ է Ֆիլիպիններում ապրող Խանուտ ցեղի լեզվում գունանունների համակարգը, որում առկա են չորս հիմնական գույների ան-

վանումներ /սև, սպիտակ, կարմիր, կանաչ/: *Սպիտակ* բառին են ամրագրված բոլոր *բաց*, իսկ *սևին*՝ բոլոր *մուգ* գույները: *Կանաչ* բառի իմաստային դաշտը ներառում է աճող բույսերի բոլոր գուներանգները, իսկ *կարմիր* բառինը՝ թանաճող /Апресян, 1995/: Նկատելի է, որ նշյալ ցեղալեզուներում մեկ գունանունը ընդգրկում է գրեթե անսահմանափակ քանակի գուներանգներ:

Գիտնականների կողմից արձանագրվել է նաև հակառակ միտումը: Օրինակ՝ թասմանների լեզվում *սև* ընդհանրական իմաստով բառ գոյություն չունի, փոխարենը սևին մոտ յուրաքանչյուր գուներանգ ունի իր առանձին անվանումը /Комлев, 2000/:

Անշուշտ, հետազոտողները չեն բավարարվել միայն տվյալ երևույթների պարզ արձանագրությամբ, այլ փորձել են գտնել նաև որոշակի բացատրություններ, բացահայտել պատճառաբանվածությունը: Այսպես, Սպենների կարծիքով, արանդա ցեղի լեզվում *կապույտ* գույնի համար հատուկ բառի բացակայությունը պայմանավորված է այն հանգամանքով, որ այդ ցեղի շրջակա միջավայրում կապույտ գույն գոյություն չունի՝ բացառությամբ երկնի կապույտի: *Դեղին* և *կանաչ* գույն արտահայտող բառերը գործածվում են նաև կապույտ գույնի համար /Васильев, 1990/:

Բերված օրինակները ցայտուն կերպով վկայում են բազմիցս նշված այն փաստի մասին, որ որոշակի կապ գոյություն ունի իրերի և երևույթների անվանման և տվյալ լեզվական հանրության կողմից այդ իրերին և երևույթներին տրվող կարևորության աստիճանների միջև: Ի սպացուցումն այս հանրալեզվական դրույթի՝ գիտական գրականության մեջ շատ հաճախ է հիշատակվում էսկիմոսների լեզվում սառույցի կամ արաբական բարբառներում ուղտերի տարատեսակների անվանումների մեծ քանակը /Тер-Минасова, 2000/: Այս մոտեցման շրջանակներում, որոշ գիտնականներ էլ վկայակոչում են տվյալ ժողովրդի աշխարհընկալման մեջ հոգեբանական գործոնը: Վեժբիցկայայի կարծիքով *կարմիրը* բնության մեջ համեմատաբար առավել հանդիպող գույնն է, այդ իսկ պատճառով առավել ցայտուն կերպով է առանձնանում և ավելի կարևորվում անվանման համար /Вежбицкая 1996/: Լեզվում աշխարհի գունային պատկերի ամբողջությունը /համեմատական լիարժեքությունը/ կախված է գունանունների քանակից: Չնայած տարբեր լեզուների բառարաններում արձանագրված են տարբեր քանակի գունանուններ, գրում է Չեյֆը, այդուհանդերձ հիմնական գունանունների քանակը հասնում է տասնմեկի /Чейф, 2003/: Այս կարծիքը կիսում են նաև շատ ուրիշ լեզվաբաններ: Այստեղ կարևոր է նշել, որ հետազոտությունների արդյունքում հայտնի է դարձել, որ սահուն կերպով մեկից մյուսին անցնող գուներանգների քանակը անսահմանափակ է /բաց համակարգ/, մինչդեռ միայն աչքի կողմից ընկալելի գուներանգների քանակը՝ սահմանափակ: Մոտավոր հաշվարկներով մարդու տեսողական ապարատը ի վիճակի է ընկալելու 500000-ից մինչև 2.500.000 գուներանգ, իսկ գունանունների պարզ բառամիավորների թիվը, այնպիսի լեզուների բացատրական բառարաններում, ինչպիսիք են ֆրանսերենը, ռուսերենը, անգլերենը, հասնում է մոտ հարյուրի, բաղադրյալ գունանունները տատան-

վում են երկուսից երեք հազարի միջև /Василевич, 1987/: Մեր հետազոտության շրջանակներում պարզ դարձավ, որ մոտավորապես նույն պատկերն է նաև հայերենում:

Ինչպես տեսնում ենք, ակնհայտ անհավասարություն է նշագծվում աչքով տարբերվող գույների և դրանց անվանումների քանակի միջև:

Եթե փորձենք ամփոփի ձևով ներկայացնել ողջ վերը շարադրվածը, ապա կարող ենք ասել, որ խնդրո առարկա երևույթի շուրջ բոլոր հիմնարար տեսակետները պտտվում են գույն-գուներանգ-գունանվանում-գունիմաստ քառանդամի շուրջ, դառնում առանցքային, հենքային դրույթներ լեզվաբանական ամենատարբեր բնույթի հետազոտությունների համար: Նշենք նաև, որ վերջին շրջանի հետազոտություններում նկատվում է համակարգային մոտեցում, ուսումնասիրվում են լեզուների գունային համակարգերը՝ իրենց ծագումնաբանական և լեզվամշակութային առանձնահատկություններով:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Berlin B., Kay P. Basic color terms. California: University of California, 1969.
2. Deutscher G. Through the language glass. Canada: Heinemann, 2010.
3. Gladstone W. E. Studies on Homer and the Homeric age. Oxford: Oxford University Press, 1858 .
4. Langacker R. Foundations of cognitive grammar // *Theoretical prerequisites*, v. 2. Stanford: Stanford University press, 1987.
5. Lührmann R. Identification of both shared and distinct proteins in the major and minor spliceosomes. Cambridge: Cambridge University press, 1999.
6. McNeil, Color's history. New Brunswick: TPH, 1996.
7. Pastoureau M. Les couleurs de notre temps. Paris: Bonneton, 2003.
8. Romano C. Au cœur de la raison. Paris: Gallimard 2010.
9. Sapir E., Whorf B. La langue comme déterminant de la pensée. Paris: Mille et Une Nuit, 1999.
10. Spencer H., Rosch E. Early contraction against experimental psychology // *Journal of experimental social psychology*, v. 4. Canada: University of Waterloo, Ontario, 1978.
11. Арутюнова Н.Д. Язык и мир человека. М.: Изд. Москва, 1999.
12. Базымба Б.А. Цвет и психика. Харьков, 2001.
13. Бородина М.А., Гак В.Г. К типологии и методике историко-семантических исследований. Ленинград: Наука, 1979.
14. Вежибицкая А. Обозначение цвета и универсалии зрительного восприятия. М.: Русские словари, 1996.
15. Верещагин Е.М., Костомаров В.Г. Лингвострановедческая теория слова. М.: Русский язык, 1980.

16. Василевич А.П. Цвет и название цвета в русском языке. М.: Изд. Ком Книга, 1987.
17. Геринг Э. Теория обратного процесса. Санкт-Петербург: Изд. Чупрун Букс, 1870.
18. Милль Д., Спенсер Г. Общая характеристика ассоциативной психологии. Минск: Изд. МИУ, 2009.
19. Онол Э. Цветообозначения в русском языке (с позиций носителя монгольского языка). Автореф. дисс. ... канд. филол. наук. М., 1996.
20. Тернер В. Цветовая классификация в ритуалах Ндембу: Проблема невербальной классификации // Тернер В. Символ и ритуал. М: Наука, 1983.
21. Чейф У.Л. Значение и структура языка. Перевод с английского. М., 2003.

А. АРУТЮНЯН – Проблема взаимоотношений цветовосприятия и цветоименования в лингвистических теориях. – Данная статья посвящена такой важной лингвистической и психологической проблеме, как взаимоотношение цветовосприятия и цветоименования. В работе в рамках теорий лингвистической относительности и лингвистической всеобщности рассматривается лингвопсихологический механизм единства биологических восприятий цветоименований и их количественной разницы в разных культурах. В контексте вышеупомянутых теорий учитываются также особенности армянского языка.

Ключевые слова: лингвистическая относительность, языковой механизм, мотивированность, лингвистический порядок, лингвистическая всеобщность, цветовая эстетика, цветословарный запас, лингвокультура, упорядочение (категоризация)

А. HAROUTYUNYAN – On the Problem of the Relationship between Colour Perception and Colour Names. – The present paper deals with such an important linguistic and psychological phenomenon as the problem of the relationship between colour perception and colour names. On the basis of linguistic and linguo-psychological theories, the linguo-psychological mechanism of common biological perceptions of colour names and their qualitative differences in different cultures are studied. The analysis is carried out within the framework of the theories of linguistic universality and linguistic relativity. The peculiarities of Armenian are also taken into account within the context of the above mentioned theories.

Key words: linguistic relativity, linguistic mechanism, motivation, linguistic category, linguistic universality, colour aesthetics, colour word stock, linguoculture, categorization